



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

<<12>> հոկտեմբեր 2016թ.

№ 248/Ն

**ք. Ստեփանակերտ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ (ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ)՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ  
ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼՂՀ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 253/Մ ՀՐԱՄԱՆԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 23.10.2012 թվականի N181-Ն հրամանով հաստատված <<Դրսեկության ձևով /էքստեռն/ փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի>> 20-րդ կետի և 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել <<2016 թվականի (հոկտեմբեր – նոյեմբեր քննաշրջանի)՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը>>:

2. Չեղյալ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2016 թվականի սեպտեմբերի 27-ի <<2016 թվականի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին>> N 253/Մ հրամանը:

3. Դրսեկության ձևով /էքստեռն/ ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության <<Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ.8 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ին:

4. Քննություններն անցկացնել 2016 թվականի հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ՝ ընկած ժամանակահատվածում ըստ կից աշխատակարգի (Հավելված 1) և ժամանակացույցի (Հավելված 2):

5. Սույն հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը (պետ՝ Ռ.Մուսայելյան):

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարին:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

**2016 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍԵՆՈՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՑ**

**(ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆ)**

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները՝ 2016 թվականի հոկտեմբեր - նոյեմբեր քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Հայաստանի աշխարհագրություն» և «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլն) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայի քննության անցկացման եղանակը՝ նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են էքստենսիվ քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2016 թվականի հոկտեմբեր - նոյեմբեր քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Անգլերեն», «Ռուսերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզկուլտուրա» առարկայի քննության անցկացման եղանակը ստուգարքն է: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն հավելված 2-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկանները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի՝

8-9 միավոր-4	16-17 միավոր-8
10-11 միավոր-5	18-19 միավոր-9
12-13 միավոր-6	20 միավոր-10
14-15 միավոր-7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից:

8. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

**Հավելված 2**

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության  
կրթության, գիտության և սպորտի նախարարի  
2016 թվականի հոկտեմբերի 12-ի  
N 270/Մ հրամանի

**Հիմնական կրթության վկայական ստանալու համար քննությունների  
կազմակերպման ժամանակացույց**

(հոկտեմբեր-նոյեմբեր քննաշրջան)

	Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	նորմատիվների հանձնում	17.10.2016
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	18.10.2016
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	19.10.2016
4.	Հասարակագիտություն	բանավոր	20.10.2016
5.	Ինֆորմատիկա	բանավոր	25.10.2016
6.	Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	27.10.2016
7.	Համաշխարհային պատմություն	գրավոր	31.10.2016
8.	Տեխնոլոգիա	բանավոր	03.11.2016
9.	Օտար լեզու- (անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ)	գրավոր	10.11.2016

*Քննությունների սկիզբը ժամը 11:00-ին:*

Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար քննությունների  
կազմակերպման ժամանակացույց

(հոկտեմբեր-նոյեմբեր քննաշրջան)

	Առարկա	քննության անցկացման եղանակը	քննությունների անցկացման օրերը
1.	Ֆիզկուլտուրա	Ստուգարք (նորմատիվների հանձնում)	17.10.2016
2.	Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	18.10.2016
3.	ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	19.10.2016
4.	Հասարակագիտություն	բանավոր	20.10.2016
5.	Ռուսերեն	գրավոր	21.10.2016
6.	Ֆրանսերեն	գրավոր	24.10.2016
7.	Ինֆորմատիկա	բանավոր	25.10.2016
8.	Աշխարհագրություն	գրավոր	27.10.2016
9.	Գերմաներեն	գրավոր	28.10.2016
10.	Համաշխարհային պատմություն	գրավոր	31.10.2016
11.	Ֆիզիկա	գրավոր	04.11.2016
12.	Քիմիա	գրավոր	09.11.2016
13.	Անգլերեն	գրավոր	10.11.2016
14.	Կենսաբանություն	գրավոր	14.11.2016

*Քննությունների սկիզբը ժամը 10:30-ին:*